ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/08

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.01.2022թ. թիվ 26/26-1/295-2022 գրությամբ «Յունիպովեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 29.12.2021թ. թիվ 3/27/90567-21 գրության հիման վրա, 10.01.2022թ. թիվ 26/26-1/295-2022 գրությամբ նախաձեռնել է «Յունիպովեր» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Յունիպովեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Յունիպովեր» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Յունիպովեր» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/08 ընթացակարգի շրջանակներում 17.01.2022թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ոստիկանությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.12.2021թ. թիվ 3/27/90567-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության և «Յունիպովեր» ՍՊԸ-ի միջև 20.05.2021թ. կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-30-ԱՊՐԱՆՔ/2021/ԱՎՏՈ/1 ծածկագրով քսանյութի ձեռքբերման գնման պայմանագրի շրջանակներում «Յունիպովեր» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները չի կատարել:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք Ձեզ ձեռնարկել միջոցներ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/08 ընթացակարգի շրջանակներում 17.01.2022թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/08 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/08 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության և «Յունիպովեր» ՍՊԸ-ի միջև 20.05.2021թ. կնքվել է թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-30-ԱՊՐԱՆՔ/2021/ԱՎՏՈ/1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է ապրանքի մատակարարման հետևյալ ժամկետը՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո, 20 օրվա ընթացքում 120կգ, 60 օրվա ընթացքում 120կգ, 180 օրվա ընթացքում 120կգ, 240 օրվա ընթացքում 140կգ, բայց ոչ ուշ քան մինչև 20.12.2021թ.:

3. Պատվիրատուն «Յունիպովեր» ՍՊԸ-ին ուղղված 28.12.2021թ. թիվ 27/1907 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության և «Յունիպովեր» ՍՊԸ-ի միջև 20.05.2021թ. կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-30-ԱՊՐԱՆՔ/2021/ԱՎՏՈ/1 ծածկագրով քսանյութի ձեռքբերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Յունիպովեր» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները չի կատարել:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Մասնավորապես մատակարարը Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համապատասխան քանակներով պետք է մատակարարեր՝ 1850 կգ քսանյութ, որի մատակարարումը ընդհանրապես չի իրականացվել:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.8-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծել է ՀՀ ոստիկանության և «Յունիպովեր» ՍՊԸ-ի միջև 20.05.2021թ. կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-30-ԱՊՐԱՆՔ/2021/ԱՎՏՈ/1 ծածկագրով Պայմանագիրը:

Հարկ է նշել, որ Պայմանագիրը կհամարվի մասնակի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը «Յունիպովեր» ՍՊԸ-ին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին: (...)»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 28.12.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.01.2022թ. թիվ 26/26-1/295-2022 գրությունը, ՀՀ ոստիկանության 29.12.2021թ. թիվ 3/27/90567-21 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի համաձայն՝

1.Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

2.***Պարտավորությունները ծագում են պայմանագրից***, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում

ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ ոստիկանության և «Յունիպովեր» ՍՊԸ-ի միջև 20.05.2021թ. կնքվել է թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-30-ԱՊՐԱՆՔ/2021/ԱՎՏՈ/1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է ապրանքի մատակարարման հետևյալ ժամկետը՝ ***Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո, 20 օրվա ընթացքում 120կգ, 60 օրվա ընթացքում 120կգ, 180 օրվա ընթացքում 120կգ, 240 օրվա ընթացքում 140կգ, բայց ոչ ուշ քան մինչև 20.12.2021թ.:***

Պատվիրատուն «Յունիպովեր» ՍՊԸ-ին ուղղված 28.12.2021թ. թիվ 27/1907 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության և «Յունիպովեր» ՍՊԸ-ի միջև 20.05.2021թ. կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-30-ԱՊՐԱՆՔ/2021/ԱՎՏՈ/1 ծածկագրով քսանյութի ձեռքբերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Յունիպովեր» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները չի կատարել:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Մասնավորապես մատակարարը Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համապատասխան քանակներով պետք է մատակարարեր՝ 1850 կգ քսանյութ, որի մատակարարումը ընդհանրապես չի իրականացվել:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.8-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծել է ՀՀ ոստիկանության և «Յունիպովեր» ՍՊԸ-ի միջև 20.05.2021թ. կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-30-ԱՊՐԱՆՔ/2021/ԱՎՏՈ/1 ծածկագրով Պայմանագիրը:

Հարկ է նշել, որ Պայմանագիրը կհամարվի մասնակի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը «Յունիպովեր» ՍՊԸ-ին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին: (...)»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 28.12.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ ***<u>Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.</u>***

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ ***<u>Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝</u>***

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ պարտավորությունները ծագում են պայմանագրից, հետևաբար՝ պայմանագրով էլ սահմանվում են պարտավորությունները կատարելու կարգն ու ժամկետները և դրանց մասով խախտումներն էական համարվելու պայմաններն ու դեպքերը, մինչդեռ՝ Պատվիրատուն 28.12.2021թ. լուծել է 20.05.2021թ. կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-30-ԱՊՐԱՆՔ/2021/ԱՎՏՈ/1» պայմանագիրը, որի կատարման վերջնաժամկետ սահմանվել է ոչ ուշ քան մինչև 20.12.2021թ., Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված ժամկետը, այն է՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի, լրացած չլինելու, այսինքն՝ Պայմանագրի 2.1.7 կետով նախատեսված էական խախտման փաստը վրա հասած չլինելու պայմաններում:

Նման պայմաններում գտնում եմ, որ առկա չեն «Յունիպովեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 10.01.2022թ. թիվ 26/26-1/295-2022 գրությամբ «Յունիպովեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**